

Գրիգոր Բալասեանին «Մուրճի» մշտական աշխատակից են անուանում, յայտարարում են, թէ «բացի այդ աշխատութիւններից (նրանք թւում են պ. Բալասեանի անտիպ աշխատութիւնները) յարգելի բանաստեղծը այս տարրուանից (1902 թ.) հիմք է գրել հայ գրականութեան մէջ առաջին անգամ լոյս տեսնող մի գուտ բանաստեղծական—գեղարուեստական հանդէսի՝ «Զգացմունք» անունով։ «Զգացմունքը՝ միշտ չ. կ. Ալիշանի իննկելի յիշաւակին նուիրուած՝ լոյս կը տեսնէ արտասահմանում շարունակաբար, տարեկան երկու գիրք, ինչպէս «Սրաբրո»։

Այս «Զգացմունքը», որի մասին մենք վերը խօսեցինք, մի նմուշ է այդ «Հայ գրականութեան մէջ առաջին անգամ լրս տեսնող» հանդէսի համար կամ՝ ինչպէս ինքը պ. Գրիգոր Բալասեանն է յայտաբարում «Մշակում», առծեռն «Զդագլունք» է:

ինչպէս տեսնում էք, պ. Գրիգոր Բալասեանը զգացմունքի առեստը է սկսել распивочно и на выносъ.

Եթէ «Համակրողների» հրաւերը յաջողութիւն դանի, մենք անշուշտ շուտով կունենանք նաև զրպանի «Զգացմունք»:

S. B.

Հմմանուէլ քահ. Նազարեանց. «ՇԵԱՆԱՀԻՈՒՆԵՐ» (Կրիստոնեղի համար). 71 եր.  
գ. 50 կ. Տոսկուա 1903 թ.

Կան մանկական գրքեր, կան և երեխայական գրքեր,  
Էմ. քահ. Նաղարեանցի գիրքը վերջին տեսակին է պատ-  
կանում:

Ամեն մի երեխայ կարող է գրել այնպիսի ստանաւորներ,  
ին պէս կը քահ. Նազարեանցր:

Ես սիրում եմ պարզ լուսնեակ՝

Վառ լապտերը բոլորակ.

**Հուսին—գիշեր միշտ ամառ**

ՑԵՐԵԿ է ողջ մեր աշխարհ»:

(«Սիրած-չսիրած բաներ»)

«Ապրիլին մեզ մեծ Սւետոռում,

Մայիս՝ երկինքը վեր Համբարձ

(«ՈՐ ամսին ինչ տօն ունենք»):

«Գալիս է շուտ Տէր (!) բնդ առաջ,

Տան բակերում խռո ենք դիզում,

Վառած մոմեր անում քաջ—քաջ

Եկեղեցուց տուն ենք տանում»:

(«*Убрал я с собой*»):

«Մեր Հայր, որ էն բարձրումն ես,  
Մենք որտեղ,  
Դու արտեղ ես,  
ինչ որ ուզենք, խնդրենք քեզ,  
Դու ամեն բան հասցրու մեզ»:  
(«Իմ ազօթքը»):  
«Առողջ ազուա՝ լի է անտառ.  
Գոռող առիւծ փշեց մացառ»:  
(«Ռ» ունեցող բառեր»):  
«Եւ մեր Լէռն, այդ գիֆ տղայ,  
Երբ որ մարդիկ սասափիկ ցրտում  
Զըլիկում էին սառցի վըրայ՝  
«Օխայ» ասէր և ծիծալում»:  
(«Փոքրիկ աղջիկ»):

Էմ. քահ. Նազարեանցի ամբողջ գիրքը (բացի «Մեծ մօր օրհնանքը» ոտանաւորից) մի կուրեօգ է: Արժանապատիւ հայրը կարծէք միջին դարերում ապրելիս լինի: Քերականութիւնը, տիեզերագրութիւնը, օրացոյցը, տօնացոյցը, թւարանութիւնը ուզում է ոտանաւորով սովորեցնել երեխաներին:

Եւ ինչեր է սովորեցնում,—այն, որ լուսինը՝ բոլորակ է, աստղերը՝ մանր կայծեր, կամ այն, որ եթէ մի երեխայ չար լինի ու ուրիշներին նեղացնի, նրան մարդիկ կարող են «թակել, ինչպէս հարկն է»:

Իսկ եթէ տէր-հայրը պատահմամբ լաւ բան է ասում, այնպիսի ձևով է ասում, որ ասածը ոչ մի ազգեցութիւն չէ կարող ունենալ ընթերցող երեխայի վրայ:

Տէր-հայրը ուզում է երեխային հասկացնել իր պարտքը և գրում է ի միջի այլոց.

«Հիմա, ինչ որ մենք տալիս ենք  
իւղձի, որբի՝ սսխաներով,  
Այն է, ինչ որ մենք խլել ենք  
Այն թոյլերից՝ տաս փութերով»:

Պէտք է ենթագրել, որ այդ գրելիս՝ տէր-հայրը մի բան զգացել է և ուզել է զգացնել տալ ընթերցողին, բայց նայեցէք նոյն երեսի ներքեր և կը տեսնէք այսպիսի մի ծանօթութիւն.

«Փութը ունի 40 ֆունտ, ֆունտը ունի 32 լոտ. լոտը՝ 3 մախալ (զալատնիկ, ՅՈԼՈԹՆԻԿ):

Պարզ է, որ տէր-հօր զգրում չը կայ և ոչ մի մախալ զգացմունք: Իսկ ինչ կարելի է անել երեխաների հետ առանց զգացմունքի, այն էլ միջնադարեան զաղափարներով և անշնորնք ու տանաւորներով:

Տիգրան Ամիրծանեան. «ՈՒՍԵԱԼ ՊԱՆԴՈՒԽՈՏ» (Ղանեցոց կեանքից). ամփոփեց Խ. Տէր-Յովհաննիսեանց. 40 եր. գինն է 15 կ. թիֆլս 1903 թ.

Տիգրան Ամիրծանեանի «Ռւսեալ պանդուխոտը» ռոբերզութիւն է: Ողբերգութեան նիւթը պանդուխոտի վիճակն ու զգացմունքներն են:

Պ. Տէր-Յովհաննիսեանը աւելորդ է համարել ամբողջապէս տպել կամ արտատպել այդ ողբերգութիւնը (ինձ յայտնի չէ—տպուած է եղել արդեօք այդ ողբերգութիւնը երբեկէ, թէ ոչ), այլ «ամիսիկել է», այսինքն բերել է միմիայն մի քանի հատուածներ, իսկ մնացած մասերը պատմել է իր խօսքերով, արձակ ոճով:

Որքան կարելի է դատել մէջ բերուած հատուածներից, պլ. Տէր-Յովհաննիսեանը զուր է «ամիսիկել» հեղինակի զրածը:

Բնթերցողին ցոյց տալու համար, թէ որքան զգացմունք է պարունակում և որքան ճաշակով է զրուած պլ. Ամիրծանեանի ոտանաւորը, մինք առաջ կը բերենք միայն մի երկոտող, որ արժէ պլ. Գրիգոր Բալասեանի ամբողջ առձեռն, զրպանի և լիակատար «Զգացմունքներին»:

«Թող, ախազէր, թող՝ որ իմ սիրա կրակ ու բոց վառուած էլնի, թող իմ աչք՝ կլկլացող պղասոր-պղասոր աղպիւր էլնի»:

### Տ. Յ.

Յարութիւն Եսայեան. «ԳՐԱԾԱՅԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ». (պատկեր) 15 եր., գինն է 5 կոռ., թիֆլս, 1903 թ.

Պ. Եսայեանի «պատկերի» նիւթը հետաքրքրական է:

Ամենքին յայտնի է, թէ ինչ գեր են խաղում զրբացները մեր հասարակութեան մնապաշտ խաւերում:

Պ. Եսայեան գիտել է երեսյթը, նկատել է մի քանի հետաքրքրական գծեր և, ուզելով հարուածել չարիքը գեղարուեստական զրուածքի ձևով, շարադրել է իր «պատկերը»:

Սակայն զեղարուեստորէն զրելու չնորհքը ամենքին չէ տուած:

Այն, ինչ որ իր աչքով տեսել է, պլ. Եսայեանը մեղ պատմում է զրագէտ ոճով, և մեղ համար այդ հետաքրքրական է: Իսկ այն, ինչ որ պլ. Եսայեանն աւելացրել է իր տեսածի վրայ կամ փոփոխել է իր տեսածում իր երեակայութեան միջոցով, ուրիշ խօսքով այն, ինչ որ պէտք է զեղարուեստական երկ դարձնէր պլ. Եսայեանի զրուածքը, դուրս է եկել վերին աստիւ-